ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

12.06.2020թ. *Քրեական գործ*
ք. Երևան *թիվ ԿԴ3/0010/01/20*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործով ընդդատության վեճը լուծելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

2015 թվականի հունիսի 18-ին Սամվել Արզումանյանը հանցագործության վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժին:

29.06.2015թ. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 46106215 քրեական գործը:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետի 17.12.2015թ. գրությամբ թիվ 46106215 քրեական գործն ուղարկվել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին՝ թիվ 12134215 քրեական գործին միացնելու և համատեղ ընթացքը լուծելու համար:

Նախաքննության մարմնի՝ 23.12.2015թ. որոշմամբ թիվ 46106215 քրեական գործը միացվել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 12134215 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 12134215 համարով:

Նախաքննության մարմնի՝ 11.03.2016թ. որոշմամբ Նվեր Նիկոլայի Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (7 դրվագ) և ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 25.07.2019թ. որոշմամբ Նվեր Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Նախաքննության մարմնի՝ 25.07.2019թ. որոշմամբ Նվեր Մանուկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (6 դրվագ):

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ս. Բասենցյանի՝ 13.08.2019թ. որոշմամբ վերացվել է թիվ 12134215 քրեական գործով Նվեր Մանուկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննության մարմնի՝ 25.07.2019թ. որոշումը:

Նախաքննության մարմնի՝ 01.08.2019թ. որոշմամբ թիվ 12134215 քրեական գործից անջատվել է թիվ 46106215 քրեական գործը:

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետի՝ 2019թ. սեպտեմբերի 26-ի գրությամբ թիվ 46106215 քրեական գործն ուղարկվել է Կոտայքի մարզային քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու համար:

Նախաքննության մարմնի՝ 01.10.2019թ. որոշմամբ թիվ 46106215 քրեական գործն ընդունվել է վարույթ:

Նախաքննության մարմնի՝ 16.03.2020թ. որոշմամբ Նվեր Մանուկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Վերոգրյալ որոշման համաձայն՝ Նվեր Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքները կատարվել են 09.05.2015թ.՝ տուժող Ս.Արզումանյանի բնակության վայրում (Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում):

2020թ. մարտի 27-ին թիվ 46106215 քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ Կոտայքի մարզի դատախազությունից ուղարկվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2020թ. ապրիլի 1-ին քրեական գործը վարույթ է ընդունվել դատավոր Վ.Ստեփանյանի կողմից:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020թ. ապրիլի 16-ին որոշում է կայացրել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ, 50-րդ և 313-րդ հոդվածների կանոններով, 11.05.2020թ. որոշում է կայացրել թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու վերաբերյալ:

Որոշման մեջ մասնավորապես նշվել է.

«(…) Դատական նիստի նախապատրաստական մասում մեղադրանքը պաշտպանող դատախազ Գ.Խաչատրյանը, հաշվի առնելով ամբաստանյալ Նվեր Մանուկյանի դիրքորոշումը, նույնպես միջնորդել է փոխել քրեական գործի տարածքային ընդդատությունը՝ պատճառաբանելով, որ դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են Երևան քաղաքին մոտ, բացի այդ՝ ամբաստանյալ Նվեր Մանուկյանի վերաբերյալ Դատարանում քննվում է թիվ ԵԴ/0635/01/19 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (6 դրվագ), և որ նպատակահարմար է, որպեսզի քրեական գործերը քննվեն մեկ վարույթում, ինչը բխում է նաև ամբաստանյալի շահերից:

Տուժող Սամվել Արզումանյանը նույնպես չի առարկել՝ նշելով, որ համակարծիք է մեղադրողի դիրքորոշման հետ:

Քննարկելով քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու հարցը, հաշվի առնելով ամբաստանյալ Նվեր Մանուկյանի դիրքորոշումը, ինչպես նաև կողմերի կարծիքները, դատարանը գտնում է, որ Նվեր Մանուկյանի վերաբերյալ թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս»:

Ինչպես երևում է թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից՝ ամբաստանյալ Նվեր Մանուկյանը բնակվում է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս՝ Երևան քաղաքում, և որ դատակոչված երեք վկաներից երկուսի, այդ թվում նաև տուժող Ս.Արզումանյանի բնակության վայրն ավելի մոտ է Երևան քաղաքին, քան դատարանի Աբովյանի նստավայրը:

Մինչ դատական նիստը ամբաստանյալ Նվեր Մանուկյանը տարակուսանք է արտահայտել իր վերաբերյալ քրեական գործերն առանձին-առանձին քննելու վերաբերյալ, և ցանկություն է հայտնել, որպեսզի գործերը քննվեն մեկ վարույթում:

Դատական նիստի նախապատրաստական մասում մեղադրանքը պաշտպանող դատախազ Գ.Խաչատրյանը, ինչպես նաև տուժող Ս.Արզումանյանը վերոգրյալի կապակցությամբ նույնպես հայտնել են դիրքորոշում՝ նշելով, որ ավելի նպատակահարմար է, որպեսզի ամբաստանյալի վերաբերյալ առկա գործերը քննվեն մեկ վարույթում:

Միաժամանակ, դատարանն արձանագրում է, որ ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի՝ Դատարանում (նախագահող դատավոր՝ Ա.Գաբրիելյան) ամբաստանյալ Նվեր Նիկոլայի Մանուկյանի վերաբերյալ քննվում է թիվ ԵԴ/0635/01/19 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (6 դրվագ):

Այսպիսով, հաշվի առնելով արդարադատության շահի առկայությունը, ինչպես նաև դատավարությանը մասնակցող անձանց՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, դատարանը գտնում է, որ Նվեր Նիկոլայի Մանուկյանի վերաբերյալ դատարանի վարույթում գտնվող քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»:

Թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է 22.05.2020թ.:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.06.2020թ. որոշում է կայացրել ընդդատության վերաբերյալ ծագած վեճը լուծելու նպատակով գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

Դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ, 47-րդ, 48-րդ, 50-51-րդ հոդվածները և վերլուծելով Վճռաբեկ դատարանի՝ 2011թ. հուլիսի 13-ի՝ թիվ

ԵԿԴ/0211/01/10, 2013 թվականի սեպտեմբերի 13-ի՝ թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, որոշման մեջ մասնավորապես նշել է.

«(…) Սույն դեպքում ստացված քրեական գործի մեղադրական եզրակացության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ենթադրյալ խարդախությունը, առերևույթ, կատարվել է Կոտայքի մարզում, որպիսի պայմաններում հանցագործության կատարման վայրով պայմանավորված՝ գործն ընդդատյա է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին: Ավելին՝ մինչդատական վարույթը ևս ավարտվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

(…)

Տվյալ դեպքում հարկ է նկատել, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը գործի տարածքային ընդդատությունը փոխելիս հաշվի է առել երկու հանգամանք: Նախ նշվել է, որ գործով անցնող անձանց մեծամասնությունն ավելի մոտ է բնակվում Երևան քաղաքին, քան դատարանի Աբովյան նստավայրին, և երկրորդ՝ մեղադրյալի վերաբերյալ Դատարանում քննվում է նաև այլ քրեական գործ:

Դատարանը գտնում է, որ նշված մեկնաբանությամբ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելը հիմնավոր չէ, քանի որ քրեական գործով անցնող անձանցից միայն ամբաստանյալն է բնակվում Երևան քաղաքում, իսկ տուժողը և երկու վկաները բնակվում են Կոտայքի մարզում և մեկ վկան՝ Գեղարքունիքի մարզում: Այսինքն՝ տվյալ դեպքում առկա չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված տարածքային ընդդատությունը փոխելու հիմք, քանի որ դատակոչված անձանց մեծամասնությունը բնակվում է հենց Երևան քաղաքում: Ընդ որում, պետք է նկատել, որ տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական այլ հիմք նախատեսված չէ, ինչը վկայում է, որ դատարաններն այլ հիմքով, մեկնաբանմամբ կամ հիմնավորմամբ չեն կարող փոխել տարածքային ընդդատությունը:

Ինչ վերաբերվում է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի այն պատճառաբանությանը, որ գործով անցնող անձանց մեծամասնությունն ավելի մոտ է բնակվում Երևան քաղաքին, քան դատարանի Աբովյանի նստավայրին, ապա Դատարանի համար նշված պնդումն անհասկանալի է, քանի որ նախ պարզ չէ, թե ինչպես է որոշվել, որ Կոտայքի մարզում բնակվող անձինք ավելի մոտ են գտնվում Երևան քաղաքին (կամ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որ նստավայրին), և երկրորդ՝ անհրաժեշտ է, որպեսզի գործով անցնող անձինք բնակվեն համապատասխան դատական տարածքից

դուրս, այլ ոչ թե այլ տարածքին ավելի մոտ, իսկ սույն դեպքում դատակոչված անձանց մեծամասնությունը բնակվում է հենց Կոտայքի մարզում:

Իսկ ինչ վերաբերվում է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի հաջորդիվ պնդմանը, որ Նվեր Մանուկյանի վերաբերյալ Դատարանում քննվում է մեկ այլ քրեական գործ, ապա պետք է նկատել, որ նմանատիպ հիմքերով քրեական գործն ընդդատության ուղարկելու որևէ հիմք ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում: Նշվածը որոշակի դեպքում (գործերի առանձնահատկությամբ պայմանավորված) կարող է պատճառ հանդիսանալ քրեական գործերը մեկ վարույթում միացնելու հարցում, այլ ոչ թե ընդդատության ուղարկելու համար որոշում կայացնելու: Հակառակ մոտեցման դեպքում, ՀՀ-ի ողջ տարածքով քրեական գործերի ընդդատությունները կարող են փոփոխվել՝ հաշվի առնելով ամբաստանյալների վերաբերյալ որտեղ և ինչ գործեր են քննվում:

Ընդ որում՝ գործն ընդդատության ուղարկելով՝ այն մակագրվել է ոչ թե Նվեր Մանուկյանի վերաբերյալ գործ քննող դատավորին, այլ՝ մեկ այլ դատավորի, ում վարույթում առկա չէ Նվեր Մանուկյանի վերաբերյալ քրեական գործ (…)»:

Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ Դատարանը գտել է, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից մատնանշված արդարադատության շահի առկայությունը, ինչպես նաև դատավարությանը մասնակցող անձանց՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների ապահովումն առավել արդյունավետ կարող է իրականացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործը քննելու արդյունքում, քան Դատարանում:

Թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 08.06.2020թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման

վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով:

Օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը (...):

Օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է: Շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը:

Օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը:

Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության:

Օրենսգրքի 292-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝ (...) գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին (...):

Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

Օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» հասկացությունը մեկնաբանելիս նշել է, որ. «Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ» *(Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Gorgiladze v. Georgia գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ):*

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. «Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա» *(Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Walchli v. France գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ):*

Անդրադառնալով արդար դատաքննության բաղադրատարրը համարվող՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» չափանիշներին՝ Եվրոպական դատարանը՝

-սահմանել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տրիբունալը ցանկացած դեպքում պետք է լինի «օրենքի հիման վրա ստեղծված»: Տվյալ արտահայտությունն արտացոլում է օրենքի գերակայության սկզբունքը, որը ներհատուկ է Կոնվենցիայով և դրա Արձանագրություններով սահմանված պաշտպանության համակարգին (Jorgic-ն ընդդեմ Գերմանիայի, § 64, Richert-ն ընդդեմ Լեհաստանի, § 41): Անկասկած, օրենքի հիման վրա չստեղծված մարմինը զուրկ կլիներ ժողովրդավարական հասարակությունում անհատական բողոքներ քննելու համար պահանջվող լեգիտիմությունից (Lavents-ն ընդդեմ Լատվիայի, § 114, Gorgiladze-ն ընդդեմ Վրաստանի, § 67, Kontalexis-ն ընդդեմ Հունաստանի, § 38):

-ամրագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «օրենք» հասկացությունը ներառում է, մասնավորապես, դատական մարմինների ստեղծումը և դրանց իրավասությունը կարգավորող օրենսդրությունը (Lavents-ն ընդդեմ Լատվիայի, § 114, Richert-ն ընդդեմ Լեհաստանի, § 41, Jorgic-ն ընդդեմ Գերմանիայի, § 64), ինչպես նաև ներպետական օրենսդրության ցանկացած այլ դրույթ, որի խախտման դեպքում մեկ կամ մի քանի դատավորների մասնակցությունը գործի քննությանը կհակասեր օրենքին (Pandjikidze-ն և այլք ընդդեմ Վրաստանի, § 104, Gorgiladze-ն ընդդեմ Վրաստանի, § 68): «Օրենքի

հիման վրա ստեղծված» արտահայտությունը ներառում է ոչ միայն տրիբունալի գոյության իրավական հիմքը, այլև տրիբունալի կողմից դրա գործունեությունը կարգավորող նորմերը պահպանելը (նույն տեղում) և տրիբունալի կազմը յուրաքանչյուր գործով (Posokhov-ն ընդդեմ Ռուսաստանի, § 39, Fatullayev-ն ընդդեմ Ադրբեջանի, § 144, Kontalexis-ն ընդդեմ Հունաստանի, § 42):

-արձանագրել է, որ համապատասխանաբար, եթե ներպետական օրենսդրական դրույթներին համապատասխան՝ ամբաստանյալի գործն ընդդատյա չէ տվյալ տրիբունալին, ապա 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով այդպիսի տրիբունալը չի համարվում «օրենքի հիման վրա ստեղծված» (Richert-ն ընդդեմ Լեհաստանի, § 41, Jorgic-ն ընդդեմ Գերմանիայի, § 64): *(Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույց, Արդար դատաքննության իրավունք (քրեաիրավական հայեցակետ), կետեր 46-48):*

Սահմանադրական դատարանը դատական մատչելիության իրավունքի կապակցությամբ նշել է, որ. «Ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում:» *(Տես ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշումը, 7-րդ կետ):*

2011թ. հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշմամբ, անդրադառնալով քրեական գործերի պատշաճ ընդդատության հարցերին, Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվեցիան (6-րդ հոդված):

Ավելին, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010) 12

Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, կենսագործելով պատշաճ ընդդատության հիմնարար իրավական արժեքը, սահմանում է, որ «Ոչ ոք չի կարող զրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով» (24-րդ հոդված, 5-րդ մաս):

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայակայությունը բացառված են եղել: Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (...)»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումներն ուղղակիորեն առնչվում են նաև քրեական գործերի ընդդատության ինստիտուտին, որի վերաբերյալ կարգավորումները սահմանված են Օրենսգրքի 6-րդ գլխում:

Մասնավորապես, Օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի ուսումնասիրությունից հետևում է, որ քրեական գործերի ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:

Նույն հոդվածի 2-րդ մասն ընդհանուր կանոնից որոշակի բացառություններ է սահմանել տևող և շարունակվող հանցագործությունների համար, մասնավորապես՝ սահմանվել է, որ տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է, իսկ շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված

այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը:

Դրանից բացի, ընդդատության վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառություն է սահմանված նաև Օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը:

Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից հետևում է, որ քրեական գործով ամբաստանյալին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքը կատարվել է տուժողի բնակության վայրում, այն է՝ Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում, իսկ քրեական գործի նախաքննությունն ավարտվել է ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նաիրիի քննչական բաժնում:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 2020թ. մայիսի 11-ի որոշման հիմքում դրվել են հետևյալ հանգամանքները.

1) ամբաստանյալ Նվեր Մանուկյանը բնակվում է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս՝ Երևան քաղաքում, և որ դատակոչված երեք վկաներից երկուսի, այդ թվում նաև տուժող Ս. Արզումանյանի բնակության վայրն ավելի մոտ է Երևան քաղաքին, քան Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի Աբովյանի նստավայրը,

2) մինչ դատական նիստը, ամբաստանյալ Նվեր Մանուկյանը մտահոգություն է հայտնել իր վերաբերյալ քրեական գործերն առանձին-առանձին քննելու վերաբերյալ, և ցանկություն հայտնել, որպեսզի գործերը քննվեն մեկ վարույթում,

3) դատական նիստի նախապատրաստական մասում մեղադրողը և տուժողը, ըստ էության, չառարկելով ամբաստանյալի՝ նախորդ կետում հայտնած դիրքորոշմանը, նշել են, որ ավելի նպատակահարմար է, որպեսզի ամբաստանյալի վերաբերյալ առկա գործերը քննվեն մեկ վարույթում,

4) «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ Դատարանում (նախագահող դատավոր՝ Ա.Գաբրիելյան) ամբաստանյալ Նվեր Նիկոլայի Մանուկյանի վերաբերյալ քննվում է թիվ ԵԴ/0635/01/19 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (6 դրվագ):

Սույն որոշման իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով նախորդ պարբերությամբ թվարկված՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշման հիմքերում դրված հանգամանքները, պետք է նշել հետևյալը.

Նախ, հարկ է ընդգծել, որ դատակոչի ենթակա անձանց ցուցակի ուսումնասիրությունից պարզվում է, որ գործով ամբաստանյալը բնակվում է Երևան քաղաքում, տուժողը և գործով երեք վկաներից երկուսը՝ Կոտայքի մարզում, մեկը՝ Գեղարքունիքի մարզում, իսկ գործով մեղադրողը հանդիսանում է Կոտայքի մարզի դատախազության դատախազ, ուստի պետք է արձանագրել, որ դատավարությանը մասնակցող անձանց մեծամասնությունը չի բնակվում Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս:

Բացի այդ, դատարանն առանց մատնանշելու այն չափանիշները, որոնցով որոշել է դատավարությանը մասնակցող անձանց բնակության վայրերի և դատարանների տեղակայման միջև հեռավորությունը՝ եկել է հետևության, որ նրանցից երկուսին Դատարանի դատական տարածքն ավելի մոտ է, այն դեպքում, երբ տվյալ հարցը կարգավորող հատուկ իրավակարգավորմամբ, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով, ամրագրված է ոչ թե տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքին «ավելի մոտ», այլ դրանից դուրս բնակվելու նախապայմանը, ընդ որում նշված նախապայմանն էլ պետք է առկա լինի քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերի պարագայում:

Անդրադառնալով դատարանի՝ ամբաստանյալի վերաբերյալ առկա գործերը մեկ վարույթում քննվելու նպատակահարմարության հարցին, անհրաժեշտ է նշել, որ քրեական գործերի միացումը և անջատումը կանոնակարգող իրավանորմերը դուրս են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ գլխի («Քրեական գործերի ընդդատությունը») կարգավորման տիրույթից ու դրա լուծումը ենթադրում է այլ հիմքեր և ընթացակարգ, ինչպիսի դիրքորոշումը սույն գործի պայմաններում էլ ավելի է շեշտադրվում՝ կապված այն հանգամանքով, որ գործը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից ուղարկվելուց հետո, մակագրվել է ոչ թե Նվեր Մանուկյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0635/01/18 գործը քննող, այլ մեկ այլ դատավորի:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 11.05.2020թ. որոշման հիմնավորումներում դրված ու վերը

հիշատակված հիմքերից և ոչ մեկը, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ընդհանուր վերցված, չեն համապատասխանում այն վավերապայմաններին, որոնց դեպքում հնարավոր կլիներ փոխել գործի տարածքային ընդդատությունը:

Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասը հանդիսանում է քրեական գործերով ընդդատությունը սահմանող ընդհանուր և հիմնական կանոնը, որի համաձայն՝ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում, ինչպես նաև այն, որ բացակայում են քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը, գտնում եմ, որ թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասությանին դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:
2. Սույն որոշումը և թիվ ԿԴ3/0010/01/20 քրեական գործն ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:
3. Որոշման օրինակն ուղարկել նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ